ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/16

ք. Երևան «10» 01 2022 թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Գ. Բաղդասարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 25-ի N 823-Ն և 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121–Ն որոշումները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում <<Մոդուլային>> տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքում օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապման խորհրդատվական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող 10 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 740 000 (չորս միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը

4.3.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում, որը չի կարող ավել լինել տվյալ տարվա համար հատկացված գումարից:

4.3.2 Կատարողը կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում մատուցման ենթակա ծառայության և ժամկետների վերաբերյալ հիմնավորումներ:

4.3.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

4.3.4 Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք.Երևան, Հալաբյան փող. 11-36
կառավարական տուն 3	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150005123803801
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01203702
Հ/Հ 900011038107	
ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«10» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/16 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում <<Մոդուլային>> տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքում օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապման խորհրդատվական ծառայության

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	71241200/	դրամ	4 740 000	1	ՀՀ Արմավիրի մարզ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օր

Տեխնիկական բնութագիրը

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	• ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր մանկապարտեզի կառուցման տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապման նախագիծ, • Հողամասի մակերեսի չափը՝ 0. 63333 հա, կադաստրային ծածկագիր՝ 04-044-0016-0052 • Նախատեսվում է նախագծել և կառուցել 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի նոր շենք՝ հիմք ընդունելով Արևիկ համայնքի համար արդեն իսկ մշակված նախագիծը:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	Նախատեսվում է - ուսումնասիրել համալիրի տարածքը և ձեռք բերել ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն՝ հորատումների և լաբորատոր փորձարկումների միջոցով, անհրաժեշտության դեպքում կատարելով երկրա-ֆիզիկական գործիքային չափումներ, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ: - կառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն (ենթակայան կամ ԼՏՊ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման՝ առկայության դեպքում) համակարգեր՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով, իսկ կոյուղու կենտրոնացված համակարգի բացակայության դեպքում տեղադրել բիո-մեխանիկական մաքրման կայան կամ կառուցել կոյուղու կուտակման հոր՝ անհրաժեշտ հաշվարկային ծավալով - համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար (առանձին նախահաշվով), դիտարկելով նաև էլեկտրական կաթսաներով ջեռուցման հնարավորությունը՝ արևային ֆոտովոլտայիկ պանելների տեղադրման համատեքստում - մանկապարտեզների տարածքում նախատեսել 144 տեղ համարժեք հզորությամբ ապաստարան /փախստարան/, որը պետք է ունենա առանձին մուտք և ելք - նախագծման ընթացիկ աշխատանքները և առաջարկվող նյութերը աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ

Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** ՀՀ կառավարություն 20.05.2021թ N823-Ն որոշում **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** - ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, - Հատկացված հողամասի սեփականության վկայական՝ անհրաժեշտ նպատակային և գործառնական նշանակություններով - ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ), - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - գեոդեզիական հանույթ, - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (բնապահպանություն, մշակույթ), **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - **ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857 հրաման <Նախադպրոցական կազմակերպությունների /հիմնարկների/> N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին** - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման՝ ՀՀշՆ 21-01-2014 «Շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման, - ՀՀՀՇՆ 53-01 «Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասի - ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» Հայաստանի Հանարապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանարապետությանքաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին, - ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանարապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանարապետությանքաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին, - ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում լրացում կատարելու մասին - ՀՀՇՆ II-7.02-95. Շինարարական նորմեր. շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների - ՀՀ կառավարության 13.12.2007թ <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1490-Ն որոշում, - ՀՀՇՆ 31-03 «Հասարակական շենքեր և շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման, - ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-Ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման,

	- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին>, - ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին, - <Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք, - Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, 17.12.2005թ. - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ԳՕՍ 25957-83 <Շարժական շենքեր և շինություններ> Դասակարգում. Տերմիններ և սահմանումներ - ԳՕՍ 22853-86 Շենքեր շարժական. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** - **Նախագծի բոլոր բաժինները մշակել՝ հաշվի առնելով առաջադրանքի բնույթը /մոդուլային տիպի բլոկներով կառուցապատում/ առ այն, որ կառույցը պետք է նախատեսել պողպատե կոնստրուկցիաներով պատրաստված բջիջներից, որոնց հիմնական մասը պետք է արտադրվի գործարանային պայմաններում** **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. **Ընդհանուր բացատրագիր** 2. **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) 3. **Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում 4. **Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 5. **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - Էլեկտրամատակարարման /ներառյալ հողանցման համակարգը/, լուսավորության /Ինսոլիացիոն հաշվարով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, կապի ցանցեր, տեսականչ-զանգ, անվտանգություն, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն - Կահավորման և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով հագեցման նախագիծ՝ ներառելով ընդհանուր նախահաշվի կազմի մեջ, որպես առանձին բաժին՝ ընդ որում հագեցումը պետք է լինի ամբողջական 6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 7. Շինարարության կազմակերպման նախագիծ 8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում 9. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ 10. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

	11. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ **Համաձայնեցումներ** *Նախագծի համաձայնեցում* 1. Համայնքի ղեկավարի, 2. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, 3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, 4. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:
Այլ պահանջներ	***Եզրակացություններ*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում - Նախագծողի կողմից ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով **Փորձաքննություններ** - Որպես բարձր ռիսկայնության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ **Պատվիրատուի կողմից,** - Պետական համալիր փորձաքննության ապահովում՝ **Պատվիրատուի (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի) նախաձեռնությամբ, որոշմամբ**, - Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության - Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման գործընթացի ապահովում Պատվիրատուիի հետ համատեղ՝ համաձայն ՀՀ կառավարության 07.06.2012թ. Ն 814-Ն որոշման, որպես ՀՀ-ում բազմակի օգտագործման օրինակելի նախագծի և պատվիրատուի կողմից դրա ներառում դրանց կատալոգում **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - Ամբողջ համալիրի շահագործման առավելագույն ժամկետ - առանձիննյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ - էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ) Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից **90 օրացուցային օր,** որից հետո ՆՆԳ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ և պետական համալիր փորձաքննության: **<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>** Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով գրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038107
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Սկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ք.Երևան, Հալաբյան փող. 11-36
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150005123803801
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«10» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/16 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/	Մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում <<Մոդուլային>> տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքում օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապման խորհրդատվական ծառայություն	-	1 185 000	1 185 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000	4 740 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038107
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ք.Երևան, Հալաբյան փող. 11-36
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150005123803801
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝

(ստորագրություն) Գ. Բաղդասարյան

Կ.Տ.

Հավելված N 3
«10» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/16 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«10» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/16 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Վճարման հանձնարարական 211228070880044 - 192-20213675 Տպված 29/12/21 11:36:02

Բանկ AM24100 Յունիբանկ ԲԲԸ "Բանկ հաճախորդ" համակարգով

Ամսաթիվ 29/12/21 (7118)

Վճարողի հաշիվ	24144000617900	Գումարը
Բանկի անվանումը	AM24100 Յունիբանկ ԲԲԸ	711,000.00 AMD
Անունը կամ անվանումը	Նորաշեն ՆՏԱԿ ՀԿՀՀ01203702 Հալաբյան 11-36 Երևան ՀԱՅԱՍՏԱՆ	
Հարկային կոդ	01203702	
Ստացողի հաշիվ	900008000698	
Ստացողի բանկը	AM90000 Կենտրոնական գանձապետարան	
Ստացող	1/ՀՀ ֆինանսների նախարարություն	
Գումարը տառերով	Յոթ հարյուր տասնմեկ հազար AMD 00	
Նպատակը	ՀՀ քաղաշինության կոմիտե, N ՀՀՔԿ-ՀՄԱ ԽԾՁԲ-21/16 պայմանագրի շրջանակներում ոռակավորման ապահովում (Լենուղի)	
Ստորագրություն 1		Ստորագրություն 2

Հաստատված է բանկի կողմից Entered : Confirmed

Վճարման հանձնարարական 211228070882044 - 193-20213679 Տպված 29/12/21 11:36:43

Բանկ AM24100 Յունիբանկ ԲԲԸ "Բանկ հաճախորդ" համակարգով

Ամսաթիվ 29/12/21 (7118)

Վճարողի հաշիվ	24144000617900	Գումարը
Բանկի անվանումը	AM24100 Յունիբանկ ԲԲԸ	474,000.00 AMD
Անունը կամ անվանումը	Նորաշեն ՆՏԱԿ ՀԿՀՀ01203702 Հալաբյան 11-36 Երևան ՀԱՅԱՍՏԱՆ	
Հարկային կոդ	01203702	
Ստացողի հաշիվ	900008000664	
Ստացողի բանկը	AM90000 Կենտրոնական գանձապետարան	
Ստացող	1/ՀՀ ֆինանսների նախարարություն	
Գումարը տառերով	Չորս հարյուր յոթանասունչորս հազար AMD 00	
Նպատակը	ՀՀ քաղաշինության կոմիտե, N ՀՀՔԿ-ՀՄԱ ԽԾՁԲ-21/16 պ-գրի շրջանակներում պայմ անագրի ապահովում (Լենուղի)	
Ստորագրություն 1		Ստորագրություն 2

Հաստատված է բանկի կողմից Entered : Confirmed